Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության շրջանակային օրենքի մշակման Խորհրդատվություն

(Արարատ լեռը, ֆոտո Ռ. Յուլիխ)

Նախապատմություն

ՀՀ կառավարությունը 2008թ. ընդունեց ազգային գործողության երկրորդ ծրագիրը շրջակա միջավայրի վերաբերյալ, որով սահմանվում են միջոցառումների շարք շրջակա միջավայրի պահպանությունը զարգացնելու համար: Այդ միջոցառումներից է նաև Շրջակա միջավայրի պահպանության մասին շրջանակային օրենքի մշակումը: Վերջինս պետք է լրացնի շրջակա միջավայրի օրենսդրության մեջ առկա բացերը և հատկապես օգնի ըստ ԵՄ մոդելի մշակելու շրջակա միջավայրի համալիր թույլտվություն արդյունաբերական ձեռնարկությունների համար: Շրջանակային օրենքը պետք է սահմանի նաև բնապահպանական իրավունքի ժամանակակից ասպեկտների հիմունքները, տնտեսական գործիքները, շրջակա միջավայրի մակնշումը, բնապահպանական մշտադիտարկումը և պատասխանատվությունը:

Նախագիծը

Նախագիծն աջակցել է Հայաստանում շրջակա միջավայրի պահպանությանը՝ նպաստելով շրջակա միջավայրի հայկական իրավունքի արդիականացմանը և վերջինիս համապատասխանեցմանը ԵՄ մոդելին: Շրջակա միջավայրի ոլորտում հմուտ գերմանական իրավաբանների խումբը մատուցել է խորհրդատվություն հայեցակարգային և բովանդակային առումներով մշակելու Շրջակա միջավայրի մասին շրջանակային օրենք: ՀՀ Բնապահպանության նախարարության և տեղական փորձագետների հետ ակտիվ երկխոսության ժամանակ գերմանական փորձագետները մշակել են առաջարկություններ՝ ելնելով հայաստանյան իրավիճակից: Նրանք համաձայնության են եկել նաև զուգահեռաբար իրականացվող «Աղտոտման համալիր կանխարգելման և հսկման համակարգ ներդնելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության հզորացում» թվինինգային ծրագրի փորձագետների հետ:Որպես նախագծի արդյունք, խորհրդատուներն առաջարկել են նոր օրենքի կառուցվածքը, ինչպես նաև 6 գլուխների մանրամասն բովանդակությունը՝ ընդհանուր առմամբ 168 առանձին դրույթներով: Այդ առաջարկների մեջ ներառվել են ասպեկտներ, որոնք մինչ այդ ընդհանրապես չեն կարգավորվել կամ ոչ լիարժեք են կարգավորվել, ինչիպիսք են օրինակ՝ միասնական սահմանումները, կանխարգելիչ բնապահպանական պլանավորման հիմունքները կամ հանրային մասնակցությունը, ինչպես նաև բնապահպանական հարցերով պետական մարմինների՝ միմյանց միջև և ՀԿ-ների հետ համագործակցությունը: ՀՀ բնապահպանության նախարարությունը մշակելու է այդ դրույթները՝ հաշվի առնելով գերմանական փորձագետների առաջարկությունները: Նախագծի շրջանակներում իրականացված աջակցության ևս մեկ արդյունք է բնապահպանական համալիր թույլտվության և հսկման հայեցակարգային և տեքստային դրույթների մշակումը և դրանց վերաբեյալ մեկնաբանությունները:

- Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
- Ժամանակահատված՝ 02/2012 – 05/2013
- Խորհրդատվություն ստացողը՝ ՀՀ բնապահպանության նախարարություն
- Իրականացնող կազմակերպություն՝ Particip GmbH
- Նախագծի համար՝ FKZ 380 01 279

Մասնագիտական ուղեկցում:
Շրջակա միջավայրի դաշնային ծառայություն
Ռալֆ Բեքեր
Հեռ.: +49-340-2103-2111
ralf.becker@uba.de

Նախագծի ղեկավարում:
Նախագիծ իրականացվող ԲՀՓ ՇՄԴԾ-ում
Ռալֆ Վոլման
Հեռ.: +49-340-2103-2196
ralph.wollmann@uba.de